



ԱՂԱՅԱՆ Ա. Ծ .

AGHAYAN A. Tz.

ՀԱՅԵՐԵՆ - ԱՆԳԼԵՐԵՆ ԶՐՈՒՑԱՐԱՆ

(ԳՈՐԾԱՐԱՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ)

ARMENIAN - ENGLISH CONVERSATION GUIDE

(FOR BUSINESSMEN)

«ԼԻԼԻԹ»

ԵՐԵՎԱՆ

YEREVAN 1990

ԱՂԱՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԾԱՏՈՒՐԻ

Հայերեն - անգլերեն զրուցարան

(գործարար մարդկանց համար)

Պատասխանատու խմբագիր՝ Վ. Գ. ԱԶԱՏՄԱՆ

Ճայերենի խմբագիր՝ Տ. Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Անգլերենի խմբագիր՝ Ն. Հ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Տեխն. խմբագիր՝ Մ. Գ. ԿՈՇԵՅՅԱՆ

Սրբագրիչներ՝ հայերեն Բ. Վ. ԱԶԱՏՄԱՆ

անգլերեն Ա. Լ. ՂՇՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Արտաքին տնտեսական կապերի զարգացմանն ու ընդլայնմանը մեծապես նպաստում է օտար լեզվի իմացությունը: Օտար լեզվի օգտագործումը օժանդակում է գործարար մարդկանց համագործակցություն հաստատելու իրենց արտասահմանյան գործընկերների հետ:

Ինչպես հայտնի է, ճայաստանի բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները ստացել են արտաքին շուկա ուղղակիորեն դուրս գալու իրավունք և արտասահմանյան բազմաթիվ երկրների հետ տարբեր բնագավառներում ընդլայնվող կապերը մեծացնում են գործարար օտար լեզվի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Կազմելով այս գրուցարանը նպատակ ենք ունեցել օգնել հայրենակիցներին, և հատկապես գործարար մարդկանց հաղորդակցվելու անգլիախոս բիզնեսմենների հետ: Զրուցարանից կարող են օգտվել ինչպես անգլերեն խոսակցական լեզվին տիրապետող անձինք, այնպես էլ սկսնակ ուսումնասիրողները: քանի որ այստեղ տրվում է անգլերեն բառի հայերեն տառադարձումը: Ճնշունական տառադարձման օգտագործման ժամանակ հարկ է նկատի ունենալ միայն մեկ հանգամանք. (:) Նշանը ցույց է տալիս, որ դրանից առաջ դրված ձայնավորը պետք է երկարացված արտասանվի, ինչպես՝ (h:), (a:), (n:), (o:):

Զրուցարանը բաղկացած է երեք մասից և հավելվածից: Առաջին մասը ներառում է թեմաներ, որոնք կարող են շոշափվել մարդկանց հանդիպման և ծանոթության ժամանակ: Երկրորդ մասը պարունակում է ընդհանուր բառապաշար

արդյունաբերության և ժողովրդական տնտեսության վերաբերյալ: Երրորդ մասը Նվիրված է բանակցությունների ժամանակ քննարկվող հարցերին (ապրանքի գին, որակ, առաքման ժամկետ և այլն): Ճավելվածի բառապաշարը կարող է օգնել արտասահմանյան գործընկերների ժամանցը կազմակերպելու և նրանց հայ ժողովրդի պատմության մասին համառոտ պատկերացում տալու համար:

Ներկա գրուցարանում քիչ թե շատ արտացոլում են գտել տնտեսագիտական, ֆինանսական, հաշվապահական տերմինաբանությունը, որը մասամբ գոնե կբավարարի գործարար մարդու այսօրվա բազմաթիվ պահանջները Այս ձեռնարկը մեր իրականության մեջ հայերեն-անգլերեն տնտեսագիտական ուղղվածություն ունեցող գրուցարան կազմելու առաջին փորձն է և նախատեսվում է արտաքին տնտեսական գործունեությանը մասնակցող անձանց համար:

Հրատարակության է երաշխավորել արտասահմանյան երկրների հետ տնտեսական համագործակցության ասոցիացիան («Հայկոնտակտ»)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	CONTENTS
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ	PART ONE
Հանդիպում	Meeting People
Ծանոթություն	Acquaintance
Ծագում, ազգություն	Origin and Nationality
Լեզու	Language
Աշխատանք, մասնագիտություն	Work, Profession
Թվականներ	Numerals
Ամիսներ	Months
Շաբաթվա օրեր	Days of the Week
Ամսաթիվ	Date
Տարիք	Age
Ընտանիք	Family
Ժամանակ	Time
Եղանակ	Weather
Տարվա եղանակները	Seasons
Համաձայնություն	Agreement

Մերժում Շնորհավորանքներ, մաղթանքներ Շնորհակալական խոսք Ներողություն խնդրելը Հրաժեշտ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ Արդյունաբերություն Հումք, շինանյութ Ժողովրդական տնտեսություն Ֆինանսներ Առևտուր Խանութներ, գնումներ ԵՐՐՈՐԴ ՄԱՍ Գործուղում Բանակցություններ Պատվեր Ապրանքը և նրա որակը	Refusal Congratulations, Wellwishings Gratitude Apology Parting PART TWO Industry Raw Materials, Building Materials Economics Finance Trade Shops, Shopping PART THREE Business Trip Talks Order Goods and Quality
--	--

Գներ Վճարում, դրամ Տեսչական ստուգում և փորձարկում Փաթեթավորում Երաշխիք Ապրանքի բարձում, ուղարկում Առաքում Փոխադրում և ապահովագրություն ՀԱՎԵԼՎԱԾ Թատրոն, կինո, երաժշտություն Ուրվագիծ հայ ժողովրդի պատմության	Prices Payment, Money Inspection and Test Packing Guarantee Shipment Delivery Transport and Insurance SUPPLEMENT Theatre, Cinema, Music Outline of Armenian History
--	---

Ա Յ Բ ՈՒ Բ Ե Ն

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ Ա ա Ծ ծ Ջ ջ Բ բ Կ կ Ռ ռ Գ գ Հ հ Ս ս Դ զ Զ ձ Վ վ Ե ե Ղ ղ Տ տ Ջ ճ Ճ ճ Բ բ Է է Մ մ Յ յ Ը ը Յ յ Ո ո Ն ն Թ թ Ն ն Փ փ Ժ ժ Շ շ Ք ք Ի ի Ո ո Ն ն Ե Վ վ Լ Լ Չ չ Օ օ Խ խ Պ պ Ֆ ֆ	ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ A a (էյ) N n (էն) B b (բի) O o (օու) C c (սի) P p (փի) D d (դի) Q q (քյու) E e (ի) R r (ար) F f (էֆ) S s (էս) G g (ջի) T t (թի) H h (էջ) U u (յու) I i (այ) V v (վի) J j (ջեյ) W w (դաբլյույու) K k (քեյ) X x (էքս) L l (էլ) Y y (ուայ) M m (էմ) Z z (զեդ)
---	---

